

« Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 19/1

23 ապրիլի 2013թ.

Քննարկման ընթացքում նշվեց, որ « ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 28.03.2013թ-ի նիստում քննության է առնվել Ա/Ձ Սերյոժա Գաբրիելյանի դիմում-գանգատը « ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 28.02.2013թ. թիվ 2103510/1 ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ ակտը թողնվել է անփոփոխ: Մասնավորապես.

համաձայն « ԿԱ ՊԵԿ նախագահի 10.10.2012թ. թիվ 2103510/1 հանձնարարագրի « օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում « օրենքների և այլ իրավական ակտերի առանձին պահանջների կատարման ճշտությունը պարզելու նպատակով Ա/Ձ Սերյոժա Գաբրիելյանի մոտ իրականացվել է օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության վերստուգում: Արդյունքում 28.02.2013թ-ին կազմվել է թիվ 2103510/1 ակտը (այսուհետ նաև վերստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 9.097.040 դրամ:

Ա/Ձ Սերյոժա Գաբրիելյանի գանգատում մասնավորապես նշված է.

գտնում ենք 28.02.2013թ.-ի թիվ 2103510/1 ակտն անհիմն է, այն հակասում է « օրենսդրության պահանջներին, ուստի այն պետք է չեղյալ համարել հետևյալ պատճառաբանություններով:

Վերստուգման ակտում արձանագրվել է փաստն այն մասին, որ Ա/Ձ Սերյոժա Գաբրիելյանը 2009թ. մարտ ամսից մինչև 10.08.2011թ. զբաղվել է հանրային սննդի կազմակերպման գործունեությամբ, հարկային տեսչություն չներկայացնելով ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարություն: Կազմված ակտում նշվել է, թե ինչպիսի տարածքներ են առկա Ա/Ձ Սերյոժա Գաբրիելյանին պատկանող սեփական տան բակում և որքան տարածքներ է նա օգտագործել ըստ ժամանակահատվածների, որպես հանրային սննդի կազմակերպման վայր: Սակայն վերստուգման ակտում չկան հիմնավոր փաստեր, որ այդ տարածքների վրա իրականացվել է հանրային սննդի կազմակերպում: Վերստուգման ակտով որևէ կերպ հիմնավորված չէ, որ Ա/Ձ-ն նշված տարածքները տարվա բոլոր ամիսներին օգտագործել է որպես հանրային սննդի կազմակերպման վայր: Չկան հիմնավոր փաստեր, թե այդ տարածքներում, որտեղ, ինչ քանակի հանգստացողների է մատուցվել հանրային սնունդ: Ստուգման արդյունքներով որևէ կերպ չի հաստատվում, որ Ա/Ձ-ն նշված ժամանակաշրջանում 127 ք/մ տարածքի վրա իրականացրել է հանրային սննդի գործնեություն: Չկան փաստագրված տվյալներ, թե ինչ քանակի և ինչ չափսի սեղաններ են եղել նշված տարածքներում, որոնց միջոցով հաճախորդներին սպասարկվել է հանրային սնունդ: Վերստուգման ակտում միայն նշվել է, որ Ա/Ձ-ն «ԱՊԿ և Բայթյան երկրների թարգմանիչների գրական-մշակութային» ՀԱՍ/Մ-ի հետ ունեցել է սննդի ծառայությունների մատուցման պայմանագիր, համաձայն որի նա մատուցել է հանրային սննդի ծառայություն ակտում նշված գումարների չափով և դուրս գրված հաշիվ ապրանքագրերի համաձայն գումարները փոխանցվել են նրա բանկային հաշվին: Նույն ակտում նշվել է նաև, որ «ԱԲՊ» ՍՊԸ-ն 14.04.2008թ-ից մինչև 10.08.2011թ-ը Ա/Ձ-ից ստացել է 13 հատ հաշիվ-ապրանքագրեր՝ 413.000 դրամ ընդհանուր արժեքով:

Գտնում ենք, որ վերը նշված, վկայակոչած փաստերը բավարար չէին ենթադրելու, թե տնտեսավարող սուբյեկտը 2009թ-ի մարտ ամսից մինչև 10.08.2011թ.-ը 55 ք/մ և 72 ք/մ բացօթյա տարածքների վրա իրականացրել է հանրային սննդի գործունեություն, առանց փաստն արձանագրելու, թե երբ, որտեղ, այդ տարածքներում, ինչ քանակի հանգստացողների է իրականացվել հանրային սննդի կազմակերպում: Վերստուգման ակտում չկան

հիմնավորումներ այն մասին, որ Ա/Ձ Ա.Գաբրիելյանն իր սեփական տան տնամերձ տարածքում նշված ժամանակահատվածում հանրային սննդի գործունեության կազմակերպման համար օգտագործել է 127 ք/մ տարածք, որից 55 ք/մ և 72 ք/մ բացօթյա տարածքներ:

Համաձայն ստուգում իրականացնող անձանց հետևությունների, իբր Ա/Ձ Սերյոժա Գաբրիելյանն ըստ տարիների, գրեթե բոլոր ամիսներին հանրային սննդի իրականացման համար օգտագործել է 127 ք/մ բացօթյա տարածք, դա այն դեպքում, երբ Գառնի գյուղում բացօթյա տարածքներ որպես հանրային սննդի օգտագործման վայր հնարավոր չէ օգտագործել անշուշտ տարվա անբարենպաստ եղանակներին:

Քանի որ <<<-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> << օրենքի համաձայն՝ ստուգումների հետ կապված վարույթի նկատմամբ կիրառվում են <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> << օրենքի դրույթները, ուստի ուսումնասիրելով վերստուգման ակտը տեսնում ենք, որ չեն պահպանվել <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> << օրենքի 55-րդ և 57-րդ հոդվածների պահանջները:

Բացի այդ, խախտվել է <<<-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> << օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի և <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> << օրենքի 46-րդ հոդվածի պահանջները, քանի որ նկատի ունենալով ստուգում սկսելու սկիզբը և ստուգումը կասեցնելու մասին ժամկետները, ստուգումն ավարտելու օրը, տեսնում ենք, որ ստուգում իրականացնող անձինք հանձնարարագրում սահմանված 10 անընդմեջ աշխատանքային օրից ավել ժամկետով են կատարել ստուգումը:

Վերոգրյալի հիման վրա խնդրում ենք չեղյալ վերստուգման ակտը:

<< ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ բողոքը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Ա/Ձ Սերյոժա Գաբրիելյանի դիմում-գանգատում նշված այն պնդման վերաբերյալ, որ խախտվել են <<<-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> << օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի և <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> << օրենքի 46-րդ հոդվածի պահանջները, այն է՝ ստուգումը կատարվել է հանձնարարագրով սահմանված 10 անընդմեջ աշխատանքային օրից ավել ժամկետով, նշվեց հետևյալը:

Ա/Ձ Սերյոժա Գաբրիելյանի մոտ վերստուգումը փաստացի սկսվել է 07.11.2012 թ-ին: Վերստուգման ընթացքում Ա/Ձ Սերյոժա Գաբրիելյանի կողմից վերստուգվող ժամանակահատվածում հանրային սննդի գործունեությամբ զբաղվելու փաստը հիմնավորելու նպատակով վերստուգման ընթացքը, համաձայն << ԿԱ ՊԵԿ նախագահի 09.11.2012 թ-ի թիվ 2159-Ա հրամանի 12.11.2012 թ-ից կասեցվել է 30 աշխատանքային օրով, իսկ համաձայն 20.12.2012թ. թիվ 2536-Ա հրամանի՝ կասեցման ժամկետը երկարացվել է 30 աշխատանքային օրով:

<< ԿԱ ՊԵԿ նախագահի վերոգրյալ հրամաններն ընդունվել են ղեկավարվելով <<<-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> << օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով և հրամաններով սահմանված պահանջները հաշվի առնելու պայմաններում կարելի է արձանագրել, որ վերստուգումը կատարվել է << օրենսդրությամբ սահմանված ժամկետում:

Ինչ վերաբերվում է դիմում-գանգատում նշված այն պնդմանը, որ վերստուգման ակտով չի հիմնավորվել վերջինովս արձանագրված խախտումները, ապա այս կապակցությամբ հարկ է նշել հետևյալը:

Ա/Ձ Սերյոժա Գաբրիելյանի հետ կատարված գործարքների օրինականության ճշտությունը պարզելու նպատակով, համաձայն << ԿԱ ՊԵԿ նախագահի 23.11.2012 թ-ի թիվ 1300380 և թիվ 1300382 հանձնարարագրերի, ՕՀՎ 17-րդ բաժնի աշխատակիցների կողմից <ԱՊՀ և Բալթյան երկրների թարգմանիչներ գրական-մշակութային> ՀԱՍ/Մ-ում և <ԱԲՊ> ՍՊԸ-ում կատարվել են հանդիպակաց ստուգումներ: Հանդիպակաց ստուգումների

արդյունքում պարզվել է, որ վերստուգվող ժամանակահատվածում «ԱՊՀ և Բալթյան երկրների թարգմանիչներ գրական-մշակութային» ՀԱՍ/Մ-ն Ա/Ձ Սերյոժա Գաբրիելյանի հետ 20.10.2010թ-ին կնքել է սննդի ծառայությունների մատուցման պայմանագիր, որի համաձայն Ա/Ձ Սերյոժա Գաբրիելյանը 27.10.2010թ-ին մատուցել է հանրային սննդի ծառայություն 160.500 դրամի, որից սնունդ՝ 144.000 դրամ և խմիչք՝ 16.500 դրամ, իսկ 28.10.2010 թ-ին մատուցել է հանրային սննդի ծառայություն՝ 412.800 դրամի չափով:

Նշված գործարքների դիմաց Ա/Ձ Սերյոժա Գաբրիելյանը դուրս է գրել 27.10.2010 թ-ի թիվ 126 և 28.10.2010 թ-ի թիվ 128 հաշիվ-ապրանքագրերը, համապատասխանաբար՝ 160.500 և 412.800 դրամի չափով: Հաշիվ-ապրանքագրերի գումարները, համաձայն 08.11.2010թ-ի թիվ 17 և 01.12.2010թ-ի թիվ 32 վճարման հանձնարագրերի, «ԱՊՀ և Բալթյան երկրների թարգմանիչներ գրական-մշակութային» ՀԱՍ/Մ-ն փոխանցել է Ա/Ձ Սերյոժա Գաբրիելյանի հաշվարկային հաշվին, որը գտնվում է «Անելիք» բանկի Նոր-Նորքի մասնաճյուղում: «ԱԲՊ» ՍՊԸ-ն 14.04.2008թ-ից մինչև 10.08.2011թ-ը ընկած ժամանակահատվածում Ա/Ձ Սերյոժա Գաբրիելյանից ստացել է թվով 13 հատ հաշիվ-ապրանքագիր՝ 413.000 դրամ ընդհանուր արժեքով: Բոլոր հաշիվ-ապրանքագրերը իրենցից ներկայացնում են հանրային սննդի գործունեության համար դուրս գրված հաշիվ-ապրանքագրեր:

Վերստուգմամբ պարզվել է նաև, որ Ա/Ձ Սերյոժա Գաբրիելյանը 2009թ-ի մարտ ամսից մինչև 10.08.2011թ-ը Կոտայքի մարզի Գառնի գյուղում գտնվող սեփական տնամերձ տարածքում զբաղվել է հանրային սննդի գործունեությամբ, որի համար Կոտայքի ՏՀՏ չի ներկայացրել ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարություն:

Վերստուգմամբ արձանագրվել է, որ Ա/Ձ Սերյոժա Գաբրիելյանին պատկանող սեփական տան բակում առկա է մոտ 60 քառակուսի մետր տարածքով քարե շինություն, որտեղ 21 քառակուսի մետր տարածքը զբաղեցնում է խանութը, 12 քառակուսի մետրը՝ թոնրատունը, 2.5 քառակուսի մետրը՝ մանղալը և 24.5 քառակուսի մետրը՝ հանգստի սենյակը: Հանրային սննդի գործունեության համար Ա/Ձ Սերյոժա Գաբրիելյանը օգտագործել է 127 քառակուսի մետր տարածք, որից 55 քառակուսի մետրը և 72 քառակուսի մետրը՝ բացօթյա տարածքներ: Ընդ որում, ըստ տարիների և ամիսների, օգտագործել է՝ 2009թ-ի մարտ, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին՝ 55 քառակուսի մետր բացօթյա տարածք, ապրիլից մինչև հոկտեմբեր ամիսներին՝ 55 քառակուսի մետր բացօթյա տարածք, հունիս, հուլիս, օգոստոս, սեպտեմբեր ամիսներին՝ 72 քառակուսի մետր բացօթյա տարածք, 2010 թ-ի փետրվար, մարտ, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին՝ 55 քառակուսի մետր բացօթյա տարածք, ապրիլ, մայիս, հունիս, հուլիս, օգոստոս, սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին՝ 55 քառակուսի մետր բացօթյա տարածք, հունիս, հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսներին՝ 72 քառակուսի մետր բացօթյա տարածք: 2011թ-ի փետրվար, մարտ, ապրիլ և մայիս ամիսներին՝ 55 քառակուսի մետր բացօթյա տարածք, հունիս ամսից առ 10.08.2011թ-ը՝ 127 քառակուսի մետր բացօթյա տարածք:

Վերոգրյալ եզրահանգումների համար հիմք են հանդիսացել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 23.11.2012 թ-ի թիվ 1300380 և թիվ 1300382 հանձնարարագրերով կատարված հանդիպակաց ստուգումների արդյունքները, գործում առկա հաշիվ-ապրանքագրերը, վճարման անդորրագրերը, քննչական մարմնի կողմից տրամադրված ելակետային տվյալները, ինչպես նաև Ա/Ձ Սերյոժա Գաբրիելյանի 09.08.2011թ-ի բացատրությունը:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Սերյոժա Գաբրիելյանի կողմից խախտվել են «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 94-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի պահանջները, որի համար հիմք ընդունելով նույն օրենքի 35 ու 36-րդ հոդվածների, 94-րդ հոդվածի 4-րդ կետի, ինչպես նաև «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23 և 25-րդ հոդվածի դրույթները հաստատագրված վճարների գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 9.097.040 դրամ:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ): Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը սովել է դրական եզրակացություն:

Հարկ է նշել նաև, որ սույն գործի քննարկման ընթացքում Հանձնաժողովը և Գանգատարկման խորհուրդը՝ որպես վարչական մարմիններ, հիմք են ընդունել քննչական մարմնի կողմից տրամադրված ելակետային տվյալները, որոնց իսկությունը պարզելը դուրս է Հանձնաժողովի և Գանգատարկման խորհրդի իրավասություններից, քանի որ դրանք ձեռք են բերվում և ստուգում իրականացնող հարկային ծառայողներին ներկայացվում են քրեական դատավարության, այլ ոչ թե վարչական օրենսդրության շրջանակներում:


Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Վերստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ